Եղիշե Չարենց

Բրոնզե քո՛ւյր իմ...

Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հա՛րս,
Լուսավոր դու, հրասիրտ ու հրավարս,
Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հարս:

Դու վառվել ես օրերի մեջ ու հրում,
Դու վառվել ես կարմրավառ այս օրերում,
Դու վառել ես գալիքները ու հեռուն:

Եվ քո սիրտը մի խարույկ է ճարճատուն,
Ու հրում քո այրվում ես հիմա դու,
Ու կարմիր են կրակները քո հատու:

Բայց գրկել է քեզ խավարը անսփոփ,
Արնոտել են կրակներդ հիմա որբ,
Օ, երկի՛ր իմ, բրոնզե քո՛ւյր իմ հրասուրբ:

Ու խավար է, շուրջդ ահ է ու մշուշ,
Արնոտել են կրակները քո անուշ
Շուրջդ ա՛հ է, շուրջդ մահ է ու մշուշ:

Քեզ խաչել են ու թքել են երեսիդ,
Օ, երկի՛ր իմ, հրադեմ ու հրասիրտ,
Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հարս իմ երազի:

Քեզ խաչել են ու թքել են երեսիդ,
Քրքջացել են լուսավոր քո երազին,
Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հարս իմ երազի:

Ու վերքերը կարմրրել են երեսիդ,
Արնոտել են շուշանները երազի,
Բայց քո ճիչը Ամոքիչը կլսի:

Եվ հողմերը կճչան ու կշաչեն,
Եվ զենքերը մեր զվարթ կշառաչեն,
Որ հառնե քո երազանքը լուսաճեմ:

Ու հրում, հողմերում մեր երազի
Կկորչեն քո դահիճները անբասիր,
Ոսոխները, ոսոխները քո զազիր:

Եվ նրանք, որ թքեցին քո երեսին
Պետք է մահը ու դժոխը երազեն
Գայլերի ու ցիների հետ միասին:

Եվ նրանք, որ լրբացել են էլ հիմա
Անկումից քո, խարխափից քո ակամա
Գտնելու են միայն մեգ ու միայն մահ:

Կխառնես դու, հրասիրտ ու հրավարս,
Կվառվես դու խնդասիրտ ու կխնդաս,
Օ, երկի՛ր իմ, բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հա՛րս: